

ՀԱՆՍԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԹԵՈԴՈՍԻՈՅ ԴԵՊՒՆՈՐ - ՆԱԽԻՋԵՒԱՆ

(Տես էջ 193)

ԺԱ

ԳԻՒՂՈՐԷՔ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ



Յինգ հայաբնակ գիւղեր կան Նոր-Նախիջևանու շրտկողմը, 18-25 վերստ հեռաւորութեամբ քաղաքէն։ Ամէն գիւղի մէջ կան նորաշէն ընդարձակ եկեղեցիներ և նոցա մօտ գիւղացի մանկանց համար զբարատուններ։ Եկեղեցեաց վերստին շինութեան գլխաւորապէս պատճառ եղած է Սրբազ. Գաբրիէլ առաջնորդ վիճակին, յորդորելով գեղացիները և ցոյցնելով միջոցները։

Մեծ-Սարա. Ս. Խաչ վանքէն գէպ 'ի արևելեան հիւսիս բանուկ ճամբով զընալով, ընդարձակ հայաբնակ գիւղ մի կ'ենէ ճանապարհորդին ընդ առաջ. այլ գեռ գիւղը չհասած՝ ճամբորդը արդէն կը ծանօթանայ գիւղացւոց տապարին և տարազին, մասամբ և նոցա բնաւորութեան։

Հայ գիւղացիին կը տարբերի Ռուս մոսկիէն, ինչպէս կերպարանքով, նոյն և զգեստաւք. յաճախ նոցա վրայ կը տեսնուի կոճկէն կապայ մինչև ցծունկ իլած, մէջքերնին դօտի, սոքերնին երկայնախանձ կոշիկ, զլուխին բորբաձև գտակ, աշխատող մշակի համար՝ շատ յարմար զգեստ։ Առհասարակ սոքա քաշուած և անհազորդ կերպ մի ունին, որով կը տարբերին ռուս պարզամիտ մշակէն. երկայն վարոյ ձևաքերնին չո՛ւ, չո՛ւ զրուցելով, յառաջ կը վարեն սոյլերը, ոյլ մօքով միշտ զբաղած կ'երևան, երկայն խօսիլ ամենին չեն սիրեր անցող զարծոյի հետ. նաև բարև տալու անգամ շատ սովորութիւն չունին, ե.

թէ Տէրտէր անգամ լինի անցաւորը. մինչդեռ ռուս գեղացին հեռուն յարգութեան նշան կու տայ իւր և այլ գեղերուն Տէրտիրոյ։ Քանի մ'անգամ մառնաւոր կառքը կեցընելով խօսք խառնեցի Սալայի գեղացւոց հետ. նոքա շնորհքով հակիրճ պատասխաններ տալով՝ ճամբանին առաջ վարեցին։ Երբոր հարցուցի արդոյ ուղեկցիս Տէր Սարգսի Ոսկերչեան թէ « Ինչո՞ւ մեր հայ գեղացին այդպէս անտարբեր կը վարուի իւր հոգեօրականաց հետ », պատասխանեց — « Այդ անդրադարձութիւնը ես ևս անելով՝ հարցուցի անգամ մի գիւղացւոյն մէկին, և այս պատասխանը ստացայ իրմէն. Հովիւը պէտք է փնտռէ ոչխարին, չէ՞ թէ ոչխարը հովուին »։ Յանդուգն պատասխան՝ գեղացւոյ մի բերնի . . .

Սալա ամենէն բարեկարգն է Նախ. իջևանու գիւղերուն մէջ, փողոցը և տները կարգով, այլ ծառոց շուքը կը պակասի. փողոցին վրայ են տանց պատուհանները, և նոցա անմիջապէս մօտ մօից զուռը։ Քարուկիր շինուած են տներն, տանց աախտակեայ յատակը մաքուր ներկած, նոյնպէս պատուհանաց չրջանակներն և դռներն. ընդարձակ է ընդունելութեան սենեակն։ Սալայի մէջ մինչև 70,000 բուրլի կարողութիւն ունեցող գեղացիներ կան, որք բաց 'ի վարուցանե՛լ առևտրով ևս կը պարապին, և անպաճոյճ գիւղական կենքը կը շատանան. եթէ տակաւ քաղաքային գեղձմունք մուտք չգտանն այդ գեղացւոց բնակարանաց մէջ, նա.

խանձելի է նոցա ապագայն: Գիւղին մէջ ամէն բանէ առաջ աչքի զարնուողն է նորաշէն բարձրաբերձ եկեղեցին, նոյնպէս բարձր զանգակատամբ: Աղիւսակերտ, ընդարձակ եկեղեցին նուիրեալ է 'ի պատիւ վերափոխման Կուսին: Ինչպէս արտաբուսած նոյնպէս 'ի ներքուստ պայծառ եւ շէն է, մասնաւորապէս խորանը պատկերապարզ եւ ոսկեզօծ խաչկալովը. այս եկեղեցին ոչ միայն գիւղի մէջ, այլ սր եւ իյէ քաղաքի մէջ պարծաճ կրնայ լինել իւր ժողովրդեան: Տեսայ հոն հին զրիմեցի իւսեր, աւետարաններ, յայտնաւորածնի երկսեռ վարժարան, ուր կ'ուսանին իբր 100 աշակերտք եւ աշակերտուհիք: Գիւղիս առաջ երէցն, Տէր Յովհաննէս Աֆտանդիբեան, Եգերացի է ազգէս (Հայապետ), որ բազում մարդասիրութիւն ցըցուց առ մեզ. քանի մի ժամ մնացինք գիւղիս մէջ, եկեղեցւոյն երէցփոխան Եղիազար աղայ' իւր տունը հրաւիրեց. եւ որովհետեւ ինձ հետաքրքրական էր տեսնել զեղացւոց բնակարանը, յօժարութեամբ ընդունեցայ հրաւերը:

Համբաւաւոր է Նախիվեանու գիւղերուն մէջ պատրաստուած դոմէշի սերը, արդէն լսած էի դովիստ այդ սերի մասին. մայիսի գեղեցիկ օրը եւ կանաչ գուռին մէջ երկթաման ճանապարհորդութիւնը փայլատուով գրգռիչ ազդեցութիւն մի արած էր՝ իմ արգոյ ու զեկցիս, նոյն եւ իմ անորժակաց վրայ, ուստի Պ. Եպիլիան խոհական ձեռով իմոցուց պառաւեալ երէցփոխանու հոյն՝ որ դոմէշի սերով պատուել Ղրիմեցի հայր սուրբը՝ շատ փոյթուց կը լինի. ինձ հարկ եղաւ այդ միջոցին՝ իբրեւ չլող առաջարկութեանը՝ լռութիւն պաշտել: Հազիւ մի կէս ժամ անցաւ, արդէն սեղանի նստած էինք, հասաւ խոր պնակով համբաւեալ սերը. աւելորդ է ասելը, որ բայ 'ի սերէն, ամենայն գիւղական բարեգը լիցուն էր պատուական երէցփոխանին սեղանը. ճարտարախօս երէցփոխանուհին առջեւ գնելով սերին պնակը, լիաբերան եւ ա.

ռատասիրտ կերպով, — « Կեր, հայր սուրբ, կ'ասէր. ձեզի համար փնտռել տուի գեղին մէջ այս սերը, մեր դոմէշները այսօր չկ'իմեցան »: Հիւրընկուտ տանտիկնոջ մարդասէր եւ քաղցր ընդունելութեան համեմատ զոայ ես այն սերը, համեղաճաշակ եւ արժանի համբաւոյ: Սեղանի միջոց մեր խօսակցութեան զլսաւոր նիւթն Ղրիմն եւ նորագիտութիւնն էին, զոր անսրբելով մոտիկ կ'անէին բարեպաշտ ասպնջականք: Հարկ տարին անցել է՝ որ սոցա պապեր թողել գնացել են Ղրիմէ, այլ որդւոց որդի գեռ եւ վառ պահած են կորուսեալ հայրենեայ յիշատակը. Ղրիմ տակու միջոյ՝ մասնաւոր կերպով կը շնչտեն Նախիվեանցիք:

Յետ երկար խօսելու, չհամբերեց եւ տանտիկնին, — « Այս օրէն է, որ այս հայր սուրբին ամէն կալաճին տեղովը կը հասկցուի. այդ ինչպէսնակ բան է »: — « Այդոր պատճառը այն է, զրուցեցի, որ մենք ամէնքս Սնեցի հայեր ենք, ու կալաճներս մէկ »: — « Այդպէսնակ տասն », աւելցուց պառաւը զոճութեամբ սրտի: Բարեպաշտիկ պառաւը՝ միայն 'ի Հայաստանէ եկող արեւելեան վարդապետներ տեսնելով, անշուշտ այս գաղափարը ստացել է, որ վարդապետաց իմաստուն խօսակցութիւնքը կէս իկէս պէտք է անիմանալի լինին հասարակ մահաւանջուոց:

Ընդունելութիւնը սիրալիր, խօսակցութիւնը զուարթ, այլ հարկ էր ինձ առաջ գնալ 'ի Նիսիվիթա գիւղ, որ եօթն վերստիւ հեռու է 'ի Սալայէ: Յետինս ինձ աւելի հետաքրքրական էր, իւր մէջը պահուած ('ի ժամոհմուս ճանապարհորդութեան վ. Հ. Մինասայ վ. Բժշկեան), նշանաւոր Յայտնաւորքին պատճառաւ. յորում գրուած է Անեցւոյդ դէպ 'ի Ղրիմ գաղթելուն պատմութիւնն: Այլ առաջ որ փոփոքութեալատար միայ, չգտայ այն գիւղին մէջ փնտռածս. կարող չեղան տեղացիք իմոցընել ինձ զրբին ուր լինելը: Այդ լիանկողին յիշատակարանն

զանազան մասամբ փափաքելի էր ինձ տեսնել, զի այնոր մէջ ըստ վկայութեան Բժշկեան Հօր, բայց ի սրտաճմիկ պատմութենէ վշտակութեանց տառապելոյ ազդիս, զծուած կայ ճիւղազիր ծառ մի տոհմի Պահլաւունի Աբրահամ իշխանի, որ ամուսնացել է Մուղալեանց աշխիւ Գէորգի դստեր՝ Թաղուհայ հետ, և որոյ աշխիւ սերունդը բարեպաշտիկն Աննա և եղբայր նորա Տրդատ հոգացել են մեզ յեանոց աւանդել Անեցի գաղթականացի պատմութիւնը դրել տալով նոյն յայտմարութիւն մէջ։ Եթէ այդ խնամոտ հայազառքը հոգ տարած չլինէին այս բանին, մի մեծ էջ մուկ պիտի մնար տոհմային պատմութեան մէջ, և ամենայն ջանք յեանոցս ի զոյ՛ր՝ զայն լուսաբանելու¹։

Նիսիսիքս ամենայն մասամբ խեղճ է քան զՍալա, աները անկարգ և ագրատին, զուրկ բուսականութենէ. եկեղեցին թէպէտ նորաշէն և աղիւսակերտ, այլ աղքատին ներսի կողմէն. վարժատան մէջ 37 բոկոսն աշակերտք. միով բանիւ ամենայն ինչ տխուր և ճնշիչ ազդեցութիւն ունեցաւ իմ վրայ։ Եթէ շուտով եկեղեցւոյն երէցը Տէր Յովնան, նէս Տէր-Սիմոնեան համակրիկի քահանայն չգար չհասնէր, անմիջիմար և կոտորած սրտով հարկ պիտի լինէր ինձ մեկնելու ՚ի զիւղէն։ Հին նոր ինչ որ կար եկեղեցւոյն մէջ յետ միանգամ աչքէ անցնելու, գնայինք Տէր-Հօր անպաճոյճ բնակարանը, որ ոչ հոռի յեկեղեցւոյն՝ բարձրէն զիւղին վրայ կը հայէր։ Տէր Յովնաննէս վաթսմամեայ ոմն է. թէպէտ ըստ վկայելոյ անձին հիւանդոտ ոմն, որ արտաբոլոտ չէր ցուցնէր, սակայն և այնպէս զուարթ և ճարտարախօս բնութեան տէր. անշուշտ շնորհիւ զուարթ բնութեան, համբերութեամբ կը տանէր իւր ոչ նախանձելի վիճակին։

Ծուլը ազբոտ, առողջութիւնը կորսնցուցած, գեղ տեղ, ուր դարման և ճար կը պահասի, և որ մեծն է՝ զուրկ այն միսիթարութենէն, որով քաջալեւրուած շատ երիցունք անտանելիաց կը համբերեն, այն է ունկնդրութիւն և հպատակութիւն հօտին։ Տէր Յովնան, նէս այս ամէն բանէ զրկուած՝ « Այսօր եթէ մեռնիմ՝ ցաւելու բան չունիմ, աչքս յօժարութեամբ կը փակեմ » կը զրուցէր։ Վշտակից եղայ վշտամբեր Տէր տիրոջ, միանգամայն հետաքրքրութիւնս կը շարժէր լսել իմանալ քանի մի տեղեկութիւնք, և եթէ յորո՞ւմ մասին էր Տէր-Հօր աւելի վիշտը. այլ հարցնել ինձ անպատշաճ կ'երևնար, որ չլինի նոր վշտաց լինիմ պատճառ։ Սակայն ընդհանրապէս վշտացեալ ինքնին խօսելու միջոցաւ դարման և միսիթարութիւն վշտաց կը փնտռէ, ուստի առանց իմ հարցնելու՝ Տէր-Հայրն ինքնին սկսաւ. — « Սթ հարիւրի չափ կը լինի ժողովուրդս, որք մեծաւ մասամբ Նոդայ-Թաթարներ են քրիստոնեայ դարձած »։ այս լսելով իմ հետաքրքրութիւնս բազմապատկեցաւ. — « Հայերէն լաւ կը խօսին » հարցուցի։ — « Ի՞նչպէս չէ, պատասխանեց Տէր-Հայրն, Հայ են ու կան »։ Գիւղին իմ վրայ ազդած տխուր տպաւորութիւնը միզի պէս հալածեցաւ Տէր-Հօր խօսելուն միջոց. ինչպէս խօսողին՝ նոյն և նորա ծուլին վրայ համակրութիւն մի սկստայ իմանալ. Նոդայ-Թաթարներ, քրիստոնեայ դարձած, հայերէն կը խօսին, և ըստ բացատրութեան Տէր-Հօր « Հայ են ու կան », ասկէ աւելի տխուր ժաղըր նոյն պարագային մէջ ինչ լսել, և ոչ անգամ կ'արնայի երեսակայել « Անցեալ օր, շարունակեց Տէր-Հայր՝ համբերութիւնս հատաւ. Ժամէն զուրս ելնելով ասի իրենց, որ եթէ այդ բանը ուրիշ անգամ՝ ևս անեն, պիտի յայտ.

¹ Սոքա Աննա և Տրդատ Պաշտօնէի շինելու ամ Են յաւաքին կէս Ժէ դարու, Թեոքոսիոս սուրբուն մեկուն վրայ ծովափտակ և զմիւրապայպ մի եկեղեցի. յորում հաստատած են տարուէ տարի և վտան սուրբ նահատակացն

մերոց տանէ ի ունի եկեղեցւոյ զոմոտիմբու. թիւն »։ Եկեղեցին նուիրած են յանուն Նիկոլայոսի սքանչելագործ հայրապետի։ Նահատակներն են 1473ին անօրէն Աէտիկ — Աճէտի կոտորած հայկազունքը ի Թեոքոսիոս։

նեմ գրով 'ի Նախիջևան հոգևոր կառավարութեան : — « Ի՞նչ բան է, ինչու » հարցուցի : « Կու գան չպուխները (ծխամորճ) ձեռքերը, կկուղ կը շարունակ ժամին դրան առաջը, միա՛կերպ խօսելով ծխաքարչը չեն պաղեցընել. երբ ժամէն վերջ կ'իջնամ մատաղը օրհնելու՝ միաբան ետեւէ կու գան, մեծ ախորժակով կ'ուտեն, կը սրբեն մատաղը, կ'երթնան բանեքնին » : Բարեպաշտ Տէր-Հայրը օրովհետեւ այս պատմելուն միջոց կ'այլալլէր, « Մի վշտա՛ւ նաք, Տէր-Հայր, մեղմով գրուցեցի, « դեռ լաւ չեն բմբռնած Զեր ժողո՛ւ « վուրդը քրիստոնէական սուրբ հաւա՛ւ « տոյգին, խրատուելու կարօտութիւն « ունին » : Իսկ մաքէս կ'անցընէի, թաթարը շուտով քրիստոնեայ և երկու դած հայ չի լինիր, ժամանակ հարկաւոր է՝ որ նա իւր անվայել սննակութեանց հրաժարի :

Միւս կողմանէ Ղրիմցի թաթարը կու գային մտացա առաջ, որք արևուկէ գլիմք, ցանցառ մօրուք, ամառը տաքին՝ խոշոր մորթէ գաակ գլուխին, — զոր տեսնելով միայն՝ մարդ կը քրքատի — կարճ ծխափայտ բերանին խածած, կը շարունակ ուրբաթ օրեր մըղկըթաց բակերուն մէջ, որը՝ ծալապատիկ քարայտաակին վրայ նստած, որը՝ կկլած պատին ներքեւ, կ'ու ծուխը ներս քաշելով և փոխադարձ միակերպ աջ ու ձախ զին թուք արձակելով :

Միևնգեռ ես Տէր-Հօրմէ լսածնէրուս վրայ կը խորհրդածէի, նա վերբաւտին սկսաւ խօսիլ առաջ վարել. — « Խօսքը մատաղի վրայ եկաւ, ստացմաքէս անցածը գրուցեմ թող պարի. դա գերեզմանոցի եկեղեցին՝ Ս. Կաթապետի անուամբ օծուիլը լաւ բան չեղաւ » : Իսկայն չհասկնալով Տէրաթիւ միտը. — « Ինչու լաւ բան չլինի, « գրուցեցի. Սուրբ կարապետ ազգիւս « պաշտպան մեծ սուրբ է. իմ կարծիքը « շատ լաւ բան արել են, որ այն գե. « ղեցիկ եկեղեցին՝ յանուն այն մեծ « սուրբին նուիրել են » : — « Այդ չէ, պատասխանեց, Տէր-Հայր, իմ գրու.

ցածս. հոն Ս. Կարապետ (գիւղին եկեղեցւոյն համար) մատաղը կը բաժնուի, հանգէսները առաջուանը չեն, մեր ուխտաւորը պակսեցան » : Հասկըցայ Տէր-Հօր միտը՝ նա կը ցաւէր իւր գիւղին եկեղեցւոյն ուխտը անքանալուն մասին, զի ժողովուրդը կը բաժնուէր, և անշուշտ մատաղին գէրերը Նախիջևանու Ս. Կարապետին մասն կ'ենէին. արգարացի էր Տէր-Հօր գանգատը : Կիսակատար մխիթարութիւն մի տուի, գրուցածիս ինքս ես համազուած չլինելով : Սակայն և այնպէս աւնօգուտ էր ցաւիլը. Ս. Կարապետ եկեղեցին 'ի Նախիջևան շինուելուն միջոց, Նիսիվիայի Տէրաթիւ խորհուրդ հարցնող չէ եղած, և ոչ նորա անդու չութեան պատճառաւ պիտի փակէին այն եկեղեցին : — Երկու ժամ մնալով գիւղիս մէջ, երկկայեան զովիկ օգով դարձանք 'ի Նախիջևան, մնացեալ դեղերուն այցելութիւնը արիշ օրուան թողով :

Սալայի և Նիսիվիայի մէջ փնտռած ներս չգանելով, կարելի էր միւս գեղերը գանց ափնել. այլ որովհետեւ երկար ճանապարհ կտրելով անցընելով եկած էի 'ի Նախիջևան, որպէս զի յապագային ցաւելու տուիթ չունենամ, օր ընդ մէջ անցընելով, համարաձման տունին Նախիջևան օրը՝ միւս երկու գեղերու այցելութեան ելանք, Արդոյ Տէր Սարգիս Ռսկերչեան քահանային հետ 'ի միասին : Այն երկու գիւղերն, այս ինքն Զայթըր (հին Ղրիմցի անուամբ Օրդալան) և Թովիթի ('ի Ղրիմ թովլու կը հնչէ) Նախիջևան ցաւելու կողմը կ'իյնան, Նախիջևանու արևմտեան հիւսիսային զին. այս երկուքն ևս բազմամարդ գիւղեր են, մէկ մէկու մօտ, այնպէս որ մէկէն միւսը կ'երևայ, քաղաքէն երկու ժամու ճանապարհ հեռաւորութեամբ :

Մեծ Սալայէն յետոյ՝ բարեկարգ գիւղն Զայթըրն է. գիւղացիք ունեւոր են, եկեղեցին փառաշէն, նուիրեալ 'ի պատիւ Համբարձման Փրկչին : Այլ այս գիւղին գիւղացւոց տարազը, ինչպէս

ևս յետագայ թոփթիի, աւելի հնաձև է կամ լատիարաձև, մինչդեռ Սալա-յիբ, արքեպիսկոպոսը, սկսած են Եւրոպա-կան ձևաց յարմարիլ:

Հոս կանայք՝ ըստ հին Ղրիմեցւոց սովորութեան՝ ծագիկայ կապաներ կը հագուին, զլուխին լայակ կապած, մազերնին ճակատնուն վրայ՝ փերչէմ կամ փերչում կտրած, ետևի կողմերէն կարգաւ բարակ հիւսուած մազերը մինչ ցօտի կը հասնին, վերնին և կտրծ-քերնին շարք շարք մանր և մեծ ոսկէ դրամը կը զարդարեն: Եղն ձևը կը հազ-նին և ալջկունք, միայն այսու տարբե-րութեամբ որ սոցա հալաւին դոյնը ի-րենց դիմաց դունին համեմատ՝ աւելի պայծառ և ծողկալից կը լինի: Ըստ հին Խորայեւրեան սովորութեան՝ տեսայնա-խիջեանու գիւղերուն մէջ՝ որ աղջկունք մեծամեծ սափորներ ուսերուն վրայ ա-ռած՝ ջրհորներէն ջուր կը կրէին, հան-դոյն Ռաքելի և Ռեբեկայ: Իսկ մանչեր մեծ և փոքր մինչև ցծունկ կապայ կըռ-նակնին, գօտէպինդ, տրեխնին լաւ զսպած, դաշտի վաստակոց կը պարա-պին. լուծ, եղ, վարուցան, կասուլ, կրել, այդոնք են նոցա գործերը:

Չալթըրցիք ՚ի մշակութեան գերաւ-զանցել են քան զմիւս զիւղայցիները. իրենց ցորենը համեղ է և աճուն քան այլըր, այնպէս որ՝ 1880ին Մոսկուայի հանգիստադրութեան (exposition) ա-ռաջին մրցանակի արժանի եղած են:

Գիւղիս երէցփոխանն՝ երիցուն հետ ՚ի միասին՝ եկեղեցւոյն ձեռագիրքը և արծաթեղէնքը ցոյց տալէն վերջ, ըստ հայկական մարդասէր հիւրամեծարու-թեան ՚ի տուն հրաւիրեց զմեզ: Թէ-պէտ և այնպիսի զբաղանաց օր չէր վա-յելու ծանրութիւն լինել, զի գիտէի արդէն՝ որ անեցիք անպարագ գործի հետ են վազուան գալու ուխտաւորները հիւրամեծարելու համար, սակայն և այնպէս կարճ միջոց՝ հարկ եղաւ միտ-նել երէցփոխանին տունը: Ինչպէս կը գուշակէի՝ ճշդիւ կատարուեցաւ. երէց-փոխանուն հին անուշահոտ գաղաները հետզհետէ փուռէն կը հանէր, կարծ

պանրով, կարտով և սերով զարդա-րուած սեղանը պատրաստ էր, կէս օրն անցնելու վրայ: Փորձեցի Չալթըրցւոց ցորենը հայկական դադանբու փո-խուած, նոր հարած կարագով խղա-թուրմ, քաղցրիկ խորխուր մէջ, և շատ համեղաճաշակ գտայ:

Գաղայից ձևը փոխուած ինձ երևե-ցաւ. հարցուցի երէցփոխանուհւոյն թէ միշտ այդ ձևով են չալթըրցի գաղա-ները. նա փարտոնեց իմ տարակոյսս, թէ այդ նոր ձև է. հին ձևն՝ ինչպէս բացատրեցի՝ ճիշդ նման գտայ Ղրիմեցի գաղայից:

Փութացի դպրոցաց այցելութեան զնալ, յորս 150 աշակերտք և աշակեր-տուհիք հայ դպրութիւն կ'ուսանին, Չալթըրցի դպրոցք ինձ բարեկարգ ե-րևեցան քան այլ գիւղօրէիցը. փոքր երախայք անսայթաք և գեղեցիկ ար-տասանութեամբ ասին տէրունական աղօթքը և ապա աղերս առ Տիրամայրն « Սէկանիմբ » . բազմութեամբ ճուաջին մի քանի ազգային երգեր:

Վարժապետն Պ. Պիճոյեան կը դանդաւատէր, թէ աղայք՝ ամառը կանու-նաւոր կերպով դպրոց չյաճախելուն պատճառաւ՝ կ'ընդհատի ուսմանց ըն-թացքը: Եւ ինչպէս յաճախեն... կը դիտէի ես այդ փոքր երեխայից ձեռքե-րը և ոտից զուսպ տրեխները, որք ա-ռանց խօսքի, ինձ կը հասկցնէին որ այդ մատաղեւրամ հայ մանկտին, համարեալ թէ յորրանէ դատապարտուած են հոգի և տարերց հետ ծեծկուելու. եղա-մսի փիւնիկեցւոյն արհեստէն առաջ՝ պէտք է նոքա ուսանին եայնեի դատա-պարտելոյն արուեստը. այն փոքր մանկը տին իրենց երեսաց քրտիկով կ'ուսեն իրենց հացը: — « Պիտա չունի, զրուցե-ցի վարժապետին, թող ամառը աշխա-տին, եթէ ձմեռը լաւ սորվին՝ այն ևս բաւական է նոցա »: Մնաք բարձր զը-րուցելով սիրուն և կայտառ հայ ման-կութեան, նոցա պատուական Տեր-Հօր և վարժապետաց՝ առաջ գնացինք ՚ի թոփթի:

Սա ամէն գեղերէն բազմամարդն է .
A.R.A.R.®

բնակչաց թիւը 2000ի կը հասնի. այլ ինչպէս արտաքին ձևովն՝ նոյնպէս և ներքին կառավարութեամբ քան զՍալա և զՉալիքը շատ յետաճողաց, Տնե-
րուն մէջ կարգ չկայ, Ղրիմու հին թա-
վարաց զիւղերուն ճիշդ տիպարը կը
կրէ հեռուէն ևս, զի մի տաղին մե-
խարկուտի գէղ կը ներկայացնէ, բո-
ւորովին զուրկ 'ի բուսականութենէ. և
թէ նորաշէն բարձրագիւր եկեղեցին հե-
ռուէն չերևայ, անկարելի կը լինի թա-
վար գիւղէ զանազանները, Մօտեցանք
եկեղեցւոյն, այլ դուռը դոց դանկելով՝
իշխմբ դէպ 'ի դպրոց, զոր մեծ եկե-
ղեցւոյն համեմատելով՝ յոյժ փոքր ինձ
երևեցաւ. և երբ լսեցի որ ուսանողաց
թիւը հարիւրէն շատ աւելի է, զորմա-
յայ թէ ինչպէս այդ փոքր շէնքին մէջ
կը հաւաքի այնչափ բազմութիւն: Տղայ
չկար ուսումնարանայ մէջ, զի կէս օ-
րին սուս գարծալ էին. պատուհան-
ները և դռները բաց էին. ստիպոյն և
այնպէս ապականած էր շէնքին օդը:
Եկաւ երէցը, բացին եկեղեցւոյն դու-
ռը, մտնելով ներս ընդարձակ տաճա-
րին մէջ՝ ազատ շունչ առի. վտան զի
այդ գեղեցկաշէն եկեղեցւոյն մէջ մարդ
կը մոռանայ առժամ չորս դին պա-
տող ճնշիչ առարկայքը: Շքեղ է եկե-
ղեցւոյս պատկերազարդ և ոսկեզօծ ա-
ւագ խորանին խաչկալը, որոյ շինու-
թեան համար գիւղացիք 10,000 րուբլի
ծախք արել են: Յակոմայ կամս դառ-
նարով դէպ 'ի Տէր-Հօր, — « Լաւ չէր
« լինել, զրուցեցի, որ այս խաչկալը ոչ
« այդչափ բարձր լինէր, և փոխանակ
« այդոր՝ սակաւ մի գիւղին ուսումնա-
« բանը ընդարձակ լինէր, որով ուսա-
« նողք ոչ ապականեալ օգով չնչէին »:
Տէրտէրը համաձայն էր կարծեացս.
այլ եղածը եղած էր: Նուիրած է եկե-
ղեցիս յանուն Ս. Սարգսի զօրավարին.
բաց յայնմանէ՝ Վերմեաճանդն ուխտա-
ւորք Ս. Պարսեղեայ ևս մեծ յարգու-
թիւն կ'ընծայեն այս տաճարիս մէջ, 'ի
յիշատակ Ս. Ուրբաթի Ղրիմեցի եկեղե-
ցւոյն, որ ցարդ կանգուն կեցած է
թոփու կոչուած գիւղին՝ մի սարի վերայ:

Երկրորդ օրը Համարձման տօնն էր,
արեւը դէպ 'ի մուտս կը խոնարհէր,
հարկ էր մեզ փութալ 'ի Նախիջևան.
Թէպէտ և մնաց մի այլ գիւղ՝ որոյ կա-
րող չեղայ յայց ելնելու, այն է փոքր
կամ Սուլթան Սալա կոչուածը, այլ մե-
ծերէն կարելի էր գուշակել և փոքրին
ինչ լինելը: Լսեցի որ այն գիւղին նո-
րաշէն եկեղեցին նուիրեալ է յանսն
Ս. Գեորգիոյ զօրավարի, և ունի ուսու-
մնարան մի 32 աշակերտով:

Ներկայ տարւոյս (1886) մի նոր
գիւղ ևս ձևացուցել են Նախիջևանցիք
քաղաքէն 12 վերստ հեռաւորութեամբ
դէպ 'ի թաղւան գնացող ճանապարհին
վրայ, որոյ Եկատերինովքա ուստահըն-
չիւն անուն տուած են: Սնշուշտ այդ
նորաշէն և 'ի չորս Նախիջևանցի հայա-
բնակ գիւղերուն վեցերորդն՝ քան զհի-
ները առաւել բարեձև կը լինի, այլ
դեռ չունի ոչ եկեղեցի և ոչ ուսումնա-
րան:

Թոփթիի անապատացեալ և անբոյս
երկրոյն՝ ախար հեռք մի թողուց իմ՝
երեւակայութեան վրայ. 'ի դարձիս
Ֆայեղունին մէջ լռիկ նստած մտախոհ
լինելով՝ որ այդ միջարկոյտներուն մէջ
հաղարաւոր հայ կեանք կը մուշի՝ զըր-
կուած բնութեան այն հաճոյական վա-
յելոյ՝ որ երկիրը առատ կ'ընծայէ սա-
կաւ մի զարգացեալ և աշխատասէր
մշակին:

Ոչ ծառոց հովանի, ոչ պտղատու
պարտէզ, ոչ բանջարանոց և ոչ սերնեւ-
տան, զուրկ են յայտմ ամենայնէ թոփ-
թիցիք, ցաւալի վիճակ: Այլ ո՞վ է այ-
դոր պատճառը: Բայ իմ՝ կարծեաց ե-
թէ քանի մի բանիւրն և դործող ան-
ձինք բանիւ և դործով առաջնորդ լի-
նին Նախիջևանու գեղացւոց՝ քիչ տա-
րինելու միջոց բոլորովին կերպարանա-
փոխ կը լինին այն տխրատեսիլ և ան-
ապատացեալ գիւղերը: Օրինակ կար-
նան լինել երբեմն անբոյս և անդալարի
գիւղերն Տաւրիոյ, յորս առաջ թա-
վարք կը բնակէին, և այժմ՝ Գերմանա-
ցիք զրախտ դարձուցին, միխրակոյտ
դէգերը ծածկուեցան անտառներուն և

պարտիզներուն՝ հովանեաց տակ. անդէս և անառաւ տեղուանք՝ փորեցին քաղցրամուր հորեր, յարգածածուկ և խղճատեսիլ ցիր ու ցան անկանոն հիւղերուն փոխանակ՝ շինեցին կանոնաւոր յատակագծի վրայ կարմիր կղմինարով ծածկուած տներ. փոխան ծոյլ թաթարաց ալլանդակ սողներուն, որոյ լսեալն անախորժ ճռնչիւնն ականջ կը խլացնէր, Գերմանացիք թեթեւեղեղաց սայլեր և կտուքեր կը գործածեն, որոյ լծուած լայնաբամակ ձիանքն վայելած և խամուլմներով՝ տեսողին նախանձն կը շարժեն: Մի և նոյն երկրին հազար գործք, առաջինք իրենց ծուլութեան և անհոգութեան համար՝ կարոտութեան մէջ տուայտեալ, մինչդեռ յետինք ժրջան մշակելով թարաբաց դետիւնները, օր աւուր յառաջագիմերով կը ճոխանան և բարոյապէս կը տիրեն բնակած աշխարհաց վրայ:

Էս այնպէս կարծեմ որ հայ գեղացին աշխատախրութեան և մտաց զարգացման մասին՝ ոչ Գերմանացւոյն և ոչ Ռուսին գիմաց կը խոնարհի. առաջնորդի պէտք ունի նա, մերձաւոր օրինակը և խրախուսիչ յորդորը չուտով կերպարանափոխ կարնան առնել Նախիլանցի հայ տխրատեսիլ գեղերը: Եթէ ոչ այժմեան գեղացիք, այլ անշուշտ՝ իմ՝ գեղերուն ուսումնարանաց մէջ աեռած փոքրիկ և կայտառ հայ մանկութիւնն՝ օր մի մեծնալով՝ պիտի իրագործեն իմ՝ փափաքը, իրենց բարօրութեան համար:

ԺԲ

ՏՕՆ ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ

ԴԱՐՁ Ի ԿԱՅՈՒ

« Համարածման երկուշաբթին, ատէք դիտող և զգերընդին », զուրյեղով շիրակացի առածը՝ ի դաշտ կը հրաւիրէ զհայ մշակը՝ ատրոպացիալ ցորենը հնձելու համար. այլ եկատերինեւորու գաւառի հայ մշակին համար՝ դեռ շատ

կանուխ էր այդ հրաւերը, մանաւանդ այս տարի (1884), զի Մայիսի 17 տօն էր Համարածման և դեռ ցորենը չէին հասկ կապել: Մեք թողով զիւղերը՝ ի բաղադրաւորներկայ դոնուելու առնական հանդիսից, Նախիլանու եկեղեցեաց մէջ, ըստ վաղեմի հայկոական սովորութեանց, եկեղեցական պաշտամունք կանուխ կը լինին. ուստի առաւօտեան ժամը Տին արդոյ բարեկամիս հետ, հետիոտս կամաց կամաց կ'երթայինք Համարածման եկեղեցին. սոյն միջոցին միակերպ մեր քովէն կու գային կ'անցնէին գեղեցիկ և թեթեւեղ լծաց փայլեալներ և արագաձուլ լծանկտուքեր և հարկարանոց և լծանկազին ձիեր լծուած, որոց մէջ բազմաւնէր հայկազուն աեռք և տիկնայք էին, որ ժամ կ'երթային Նախիլանու բոլոր ծուխերէն, պատուելու այդ մեծ տօնը՝ համանուն եկեղեցւոյն մէջ: — Նախիլանցիք սիրող և յարգող են եկեղեցական հանդիսից և ուխտագնացութեանց: Նախընթաց օրը ես՝ մինչդեռ զիւղերէն կը դառնայինք՝ կարգ կարգ ուխտաւորք ի Չաթըր կ'երթային. զի զիւղին եկեղեցին ես ի պատիւ Համարածման փրկչին կանգնած է: — Հասանք եկեղեցին, որոյ մտից տալիս կարգաւ շարուած էին բազմաթիւ կառքեր, որոց լծուած ձիերուն մեծամեծ աչքերով կրակոտ նայուածքը, խրխինջը և դոփիւնը՝ մեծահանգէս և անաս, վոր իմն տօն կ'աւետէին. մտանք եկեղեցւոյ բակին մէջ՝ ուր ժողոված էր խուռն բազմութիւնն. հեռուէն մեզմ' ներդաշնակութիւն պաշտամանց եկեղեցւոյ բոցավառ ջահը՝ որք պատուահաններէն ի դուրս կը ցուլային, խառն ընդ անուշահոտ բուրմանց խնկոյ, յոյժ հաճոյական և բերկրալից մի զգացումն ազգեցին յիս: Ճեղքելով ժողովրդոց բազմութիւնը՝ արդոյ բարեկամս տաբալ զիս ի դաս, ուր կանգ առի ալեւորեալ և երկրորդն աչք լուսաւորեալ՝ մի երիցու քով: Սուրբ պատարագն առաջ

1 Դրեմեք և Նախիլանցիք փոխաբերաբար յուսաւորիկ կուրանալու մտքով կը գործածեն:

կ'երթար վայելուչ և բարեկարգ ձևով, նախորտապատ և սաղուարտեալ երեց մի, կրելով ուսոց վրայ արծաթապատ և ծանրակշիռ վակաս մի՝ կանգնած էր սեղանոյն առաջ. ուրարաւոր սարկաւազ մի՝ յաջին բուրվառ և ձախ ձեռքը մի ճրագ վառ՝ կը վարէր պաշտօն տաւ. գի, սարկաւազի և կիսասարկաւազի եւս. վասն զի միակ ինքը մնացել էր, և չկար իրեն օգնական, Նախիջևանու պէս հայուկեամբ բազմամարդ և շատ հոգեւորականք քաղաքի (20. քահանայք և նոյնչափ սարկաւազունք) կը վայելէր, ըստ իմ՝ կարծեացս, եկեղեցական պաշտամունքները, զոնէ մեծամեծ տօնեւրու օրեր, բազմութեամբ հոգեւորակաւ նաց կատարել. քանի չբեղ պիտի լինէ. ին նոյն օրուան տեսած հանդէսքն եթէ յաջմէ և ի ձախմէ սեղանոյն դոնէ վեց ուրարաւորեալ հոգեւորականք կանգուն գտնուէին:

Ի միջավայրի դասուն շարուած էին դպրապետին երկու կողմը՝ փոքր երաւ, խաչք, որք դպրապետին ձեռին շարժմամբ (ըստ եւրոպական ոճոյ) ոգեւորեալք երբեմն քանզպափնաւերկր բարձրացնէին ձայներնին, որով չէին համապատասխանել բնմին ելած դաշնակաւ. եւս և մեղմն ձայնից ժամարարին և սարկաւազին. եթէ այդ փոքր դպրաց երգեցողութիւնք չափու մէջ լինէին, ամենայն ինչ ներդաշնակ և յոյժ վայելուչ պիտի լինէր:

Սակայն ՚ի դասուն անմիջապէս մօտըս կանգնած լուսաւորեալ աչօք անցեալ դարէ մնացեալ Տէրաէրը՝ իւր քաղցրիկ և զողդոյուն ձայնիւր իմ ուշքս գրաւեց. նա զիս չէր տեսներ, զի զրկուած էր լուսոյ ներդործութենէ, այլ այնպէս ներդաշնակ և սրտախօսիկ ձայնիւ ամենայն պաշտամունք մեզմիկ ձայնովն կ'երգէր, որ մինչև սրտիս խորը կ'ազդէին. դեռ եւս ականջացս մէջ կը հնչեն ծերուն՝ անտառաց փխրմովին նման մեղրածորան հազագները:

Պատարագէն վերջ խաչալուսայ հանդէսը պիտի կատարուէր. ծանրագին շուրջառ մի սուրին ծերուն կունակը, որ

չատ տարի ժողովրդապետի պաշտօն վարել էր եկեղեցւոյն, և ինքն իբրեւ նոր ոմն խաչակ լուսաւորեալ աչօք, պիտի կատարէր այդ օրհնութեան հանդէսը՝ առանց տեսնելու. ինձ կարի ցանկալի էր ներկայ դտնուիլ այդ արարողութեան եւս, այլ ժամը տասը անցել էր, օրով առաջ հրաւիրուած էի Ռոստովի կաթողիկոսեան եկեղեցին ժամարար լինելու նոյն օրը. փոքրիկ կառք մի վարձելով փութացի ՚ի Ռոստով, ուր խուռն բազմութիւն ժողոված եկեղեցւոյն չորս կողմը կը սպասէին, ՚ի թիւս որոց և բազմութիւն ազգայինք: Մինչև երեկոյ ՚ի Ռոստով մնացի և նոյն օր՝ կէս օրուն ճաշը ունեցայ պատիւ վայելելու Պ. Յովհաննէս Տէր-Սարգսյանցի տան մէջ, որ ինչպէսկանխաւ դուրցեցի, Ռոստովի մէջ մեծ հայկական տպարան ունի, և ի վաղուց ինձ բարեկամ է. էրեւկոյին գառնալով ՚ի Նախիջևան պատրաստուեցայ վաղուան ճանապարհին, փոքր ուղոյ պարկիս մէջ ամփոփելով աստի և անտի ընդօրինակած յիշատակարանքս: Եւ որովհետև արդէն հրաւիրուած էինք նոյն երեկոյին Եղիա Ալա Պալապանեանի տուն, բաժակ մի չայի (ըստ ռուսաց բացատրութեան), արգոյ իպիփանու հետ գնացինք վերջին երեւկոյն անցընելու մեր հին բարեկամին քով: Եղիա Ալա դարուս հետ ՚ի միասին կը քայլէ, այլ դեռ ժիր, առողջ է մտք և մարմնով. նա Անեցի գաղթականաց մէջ է, այլ յետոյ ի Պարսկահայոց Նախիջևան եկած. ինչպէս ինքն՝ նոյնպէս և հօրամոյն զաւակունք՝ բարձր են հասակաւ և քաջաւոր ի կազմով, նոյնպէս ընչիւք և ստացուածովք: Աւելորդ է կարծեմ զուրցելը, որ բաժակ մի չայի հրաւէրը՝ բազմազան քաղցրածաշակ ըմպելեաց փոխուեցաւ, և մեծածկաւ ընթերցաց սեղանը զարդարեցին Ալախու ծովու աղնիւ ձկունք՝ իրենց համեղաճաշակ կիթերով: Գիշերուան ժամը 12ին, յայտնելով իմ սրտէ շնորհակալութիւնքս առ հասարակ ամենայն Նախիջևանցւոց, մանաւանդ անարգամեծար տանուտեարց և հիւրընկալ ասպնջակա.

նաց, դարձանք 'ի առն Պոպոյեանցի, ուստի առաւօտեան ժամը Տին յուղի անկայ, նոյն ճանապարհաւ որով հասել էի 'ի Նախիջևան՝ վերադառնալի կաֆա: Մեծապէս դոհ եմ՝ որ չհանդիպեցայ Ազխու ծովուն անհանդարտ ալեաց կատաղութեան. երբ ի կերչէ շոգենաւը կը յառաջէր դէպ 'ի Թէոդոսիա, և կը պարզէր նաւուն առաջ Սե ծովն՝ իւր կապուտակ ծոցը վէտ առ վէտ գեղեցիկ կոհակներով, յանկարծ միտքս եկան Ազխու պղտոր և դեղնադոյն անհանդարտ ալիքը, որ Եւքսինոսի համեմատելով՝ շատ անխորժ և ագեղ երևցան: Տակաւ առաջ գնալով, ընդ առաջ մեր կ'ենէր (ըստ մեր ձեռագրաց բացատրութեանց) ծովադիտակ և հոյակապ մայրաքաղաքն Կաֆա, իւր այժման մերկապուլիս սարերով, զորս

մեր տնայէն նախնիք զարդարել են դրմբեթազարդ տաճարներով, և յետոյ տընաւեր խուժանք քարոքանդ արել են և զԵրովային Հայաստան (Armenia marittima) աւերակաց և դերկաց կոյտեր դարձուցել են: Մինչդեռ Թէոդոսիոյ նաւահանգիստը մտնելով՝ կ'ուզէի ըզգալ այն մխիթարութիւնը, զոր ամէն ճանապարհորդ կը զգայ՝ յեամսօրեայ բացակայութեան 'ի տուն վերադառնալով, ամբօխեալ մտածութիւնը կը վերդովէին իմ միտքս, Թէոդոսիա, Նախիջևան, Կամենից, և ապա տարաբազմակի միտքս կու գային, այդ քաղաքաց մէջ շատ ու շատ վշտեր կրել են Հայկազունք... « Տէր Աստուած, մտաց խորէն կը հառաչէի, երբ այդ տաւապեալ ազգին վրայ գլխած աշօք պիտի նայիս »:

Հ. ԲԵՐՈՎՅԵ Վ. ՔՈՒՆՆԵՐԱՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ԱՏՈԼՓ ԲԱՌԻՄԳԱՐՏՆԷՐԻ

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ՊԻՏՈՅԻՑ ԳՐՈՅ ՎՐԱՅ

Մերոյ քերթողաձոր մերոյ Մովսէսի խորեմացոյ լախակիր բոքիւն հեռուորական, առաջեալ գիրք Պիտոյից ք ինքնընտիր վերնագրով, 1796ին հայեքէն ճարտասանութիւն մի հրատարակուած է 'ի Ս. Ղազար 'ի Յովհաննէս Բիւզանդացի Մխ. վարդապետէ: Այս գրուածոյս իբրու հեղինակ Մովսէս մի կը յիշուի 'ի խորագրին. իսկ հրատարակողն Զօհրապ, յետոյ Աստուածա-

շունչ գրոց հայերէն թարգմանութեան անհամեմատ հրատարակութեամբն, և Սնեկը Մայի հետ ձեռնարկած Եւսեբեայ ժամանակագրութեան տըպագրութեամբն զիտնական և հմուտ անձ մի ձեռնցում է: — Հայք՝ գէթ տասներորդ դարէն 'ի վեր այս ճարտասանութիւնս Մովսիսի խորեմացոյ՝ երկատիրութիւն կը համարին, ինչպէս նաև նորա հրատարակողն Զօհրապ նոյն կարծեաց վրայ է. և իբրև գործ

¹ Կը թողում աստ զՄովսէս իւր ծննդեան ազգանուամբն խորեմացի, փան զի այս միայն աւանդուած է մեզ, և ոչ իւր ծննդեան տեղոյն անունն: Նա խորեմացի կը կոչուի ստէպ ոչ մի-

այն իւր պատմութեան ձեռագրաց Ա. գրոց՝ Ա. գլխոյն պատճենին մէջ, այլ նաև առ Թովմայի Արծրունոյ (տպ. Կոստ. 1852, էջ, 3, 28 և 82, 22), նոյնպէս նաև յաճախ և առ յետին մատե-